**«Հրավիրիր հարևանիդ» հատուկ առաջարկի պայմաններ**

**Գործողության ժամկետ՝ 16.04.2026թ.-ից մինչև 30.04.2026թ.-ը ներառյալ**։

«Հրավիրիր հարևանիդ» առաջարկի շրջանակում՝ OVIO-ի գործող բաժանորդները կարող են հրավիրել նոր բաժանորդի և ստանալ **2 ամիս անվճար ծառայություններ**, իսկ նոր բաժանորդը՝ միանալ **«**2 ամսավճարի չափով նվեր**» հատուկ առաջարկին**։

**Առաջարկի պայմաններ**

- **Հրավիրող (գործող բաժանորդ)**
- Ստանում է **2 ամիս անվճար ծառայություններ** միայն այն բանից հետո, երբ Հրավիրվողի ծառայությունները ակտիվացվում են։ (Եթե Հրավիրողի հաշվին առկա է **դրական մնացորդ** (ներառյալ նախկինում տրամադրված բոնուսները), ապա այդ գումարը **չի օգտագործվում** 2 ամիս անվճար ժամանակահատվածում, մնացորդի օգտագործումը սկսվում է **անվճար ժամկետի ավարտից հետո**)։

- **Հրավիրվող (նոր բաժանորդ)**
- Միանում է գործող հատուկ առաջարկին տարեկան բաժանորդագրությամբ և ստանում է 2 ամսավճարի չափով նվեր։ Յուրաքանչյուր Հրավիրող կարող է հրավիրել առավելագույնը 1 նոր բաժանորդ։

**Ովքեր կարող են մասնակցել** Հրավիրող կարող են լինել միայն այն բաժանորդները, ովքեր ունեն՝

- «Առանձին ինտերնետ (Wi-Fly/Wi-Fly տարեկան)
- «Ինտերնետ + Wink TV (All in/All in տարեկան)
- «Ինտերնետ + Wink TV + ֆիքսված հեռախոսակապ (All in/All in տարեկան)։

*Առանձին Wink TV կամ առանձին ֆիքսված հեռախոսակապի բաժանորդները չեն կարող օգտվել առաջարկից։*

**Օգտվելու կարգ**

- Առաջարկին կարող է միանալ ինչպես **Հրավիրողը**, այնպես էլ **Հրավիրվողը**։
- Կարելի է դիմել՝
  ➤ OVIO-ի վաճառքի և սպասարկման սրահ (ՎՍՍ),
  ➤ կամ Զանգերի կենտրոն։

- Պետք է ներկայացնել՝
  ➤ մյուս կողմի անունը,
  ➤ հեռախոսահամարը:
- ՎՍՍ դիմելու դեպքում՝ աշխատակիցը կապ է հաստատում և կազմակերպում միացումը :
- Զանգերի կենտրոն դիմելու դեպքում՝ տվյալները փոխանցվում են Մանրածախ վաճառքի թիմին՝ հետագա կապ հաստատելու համար: